ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4516-Ա «15» սեպտեմբերի 2026 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԳԼԽԱՎՈՐԱԾ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԵՒ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԻՌԼԱՆԴԻԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԼՈՆԴՈՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով և հիմք ընդունելով Բլումբերգ Եվրոպական քաղաքների առաջնորդության նախաձեռնության ղեկավար Ալբա Չիարա Լամբերտիի ստացված հրավերը՝ Բլումբերգ Եվրոպական քաղաքների առաջնորդության նախաձեռնությանը մասնակցելու նպատակով.

1. Երևանի քաղաքապետի գլխավորած պատվիրակությանը 2026 թվականի հոկտեմբերի 2-ից 7-ը ներառյալ Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության մայրաքաղաք Լոնդոն գործուղել հետևյալ կազմով.

Տիգրան Ավինյան Երևանի քաղաքապետ

Լուսինե Դայան Երևանի քաղաքապետի խորհրդական

2. Ընդունել ի գիտություն, որ Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանի գործուղման հետ կապված բոլոր ծախսերը հոգում է հրավիրող կողմը, բացառությամբ հոկտեմբերի 2-ի գիշերակացի, իսկ Երևանի քաղաքապետի խորհրդական Լուսինե Դայանի գործուղման հետ կապված բոլոր ծախսերն իրականացվում են Երևան քաղաքի 2026 թվականի բյուջեի միջոցների հաշվին:

3. Ընդունել ի գիտություն, որ Երևանի քաղաքապետի գործուղման ծախսերի փոխհատուցումը կատարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման N 1 հավելվածի 13-րդ կետի համաձայն:

4. Գործուղումից վերադառնալուց հետո, 3 աշխատանքային օրվա ընթացքում, փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը և դրանք հավաստող փաստաթղթերը ներկայացնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ